Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ – 186 օրենքի (այսուհետ՝ օրենք) 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 43-րդ կետով.

«43. Բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, պետական մարմինների և պետական հիմնարկների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճեն) տրամադրման համար՝

10 էջը գերազանցող տպագրված կամ պատճենահանված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի մեկ և կես տոկոսի չափով

յուրաքանչյուր էլեկտրոնային կրիչի (պնակիտ, խտասկավառակ, տեսասկավառակ) համար՝ բազային տուրքի 30 տոկոսի չափով.

յուրաքանչյուր ձայներիզի համար՝ բազային տուրքի 30 տոկոսի չափով.

յուրաքանչյուր տեսաերիզի համար՝ բազային տուրքի չափով»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 9^1-րդ մասով.

«9^1. Բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց հիմնարկների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) 10 էջը գերազանցող տպագրված կամ պատճենահանված յուրաքանչյուր էջի համար՝ 15 դրամ.

բ) յուրաքանչյուր էլեկտրոնային կրիչի (պնակիտ, խտասկավառակ, տեսասկավառակ) համար՝ մինչև 300 դրամ.

գ) յուրաքանչյուր ձայներիզի համար՝ մինչև 300 դրամ.

դ) յուրաքանչյուր տեսաերիզի համար՝ մինչև 1000 դրամ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: